


## Տեղեկատվական պայքարի ազդեցությունը բնակչության եվ զինված ուժերի անձնակազմի վրա. դիմակայման ուղիները

Հարությունյան Խաչատուր Ա.

ավագ դասախոս, շրջագնդապետ,

Ռազմավարական առաջնորդության և կառավարման հետազոտությունների կենտրոն,

ՀՀ ՊՆ Պաշտպանական ազգային հետազոտական համալսարան (Երևան, ՀՀ)

 <https://orcid.org/0009-0002-4705-7779>

[xchoharutyunyan06@gmail.com](mailto:xchoharutyunyan06@gmail.com)

ՀՏԳ՝ 355.4; EDN: PXYMVB

DOI: 10.58587/18292437-2025.4-25

Հանգուցաբառեր և բառակապակցություններ՝ ժամանակակից պատերազմներ, զինված ուժեր, հիբրիդային պատերազմ, տեղեկատվական պայքար, բարոյահոգեբանական վիճակ, բարոզություն, ապատեղեկատվություն, տեղեկատվական գրոհ, հասարակություն, զինձա-նայողներ

### Влияние информационной борьбы на население и личный состав вооруженных сил: способы противостоять

Арутюнян Хачатур А.

старший преподаватель центра исследований стратегического руководства и лидерства, Национальный оборонный исследовательский университет МО РА, подполковник (Ереван, РА)

**Аннотация.** В целях всестороннего изучения характера современных войн и вооруженных конфликтов, прогнозирования войн будущего, эффективного осуществления военного строительства и строительства Вооруженных сил, а также, в частности, более эффективной организации работы Генерального штаба Вооруженных сил, важно всесторонне и глубоко изучить и осмыслить современные возможности и средства ведения информационной борьбы, являющейся характерной чертой современных войн, с целью эффективного противодействия информационной войне, ведущейся противником: Информационная борьба приобретает все более сложные и многоуровневые формы в условиях глобализации и быстрого развития цифровых технологий. Он рассматривается как один из ключевых инструментов политического, экономического и военного давления, направленный на изменение общественного сознания, подрыв социальной стабильности и снижение оборонного потенциала государства. В статье исследуется влияние информационной борьбы на две приоритетные целевые группы: гражданское население и персонал Вооруженных сил: Типичными инструментами воздействия на гражданское население являются массовые информационные вбросы, манипуляции в социальных сетях, распространение фейковых новостей и формирование атмосферы недоверия к официальным институтам. Подобные действия могут вызвать чувство недоверия к военно-политическому руководству государства, неуверенности в безопасности, страха и социальной фрагментации. Информационные атаки на Вооруженные силы направлены на подрыв морально-психологического состояния военнослужащих, снижение уровня дисциплины. В статье были представлены компоненты информационной борьбы, ее влияние на национальную безопасность и общественные институты, а также стратегии государственного и общественного противодействия с уделением особого внимания основным направлениям противодействия, включая развитие национальной системы информационной безопасности, повышение медиаграмотности граждан и военнослужащих, подчеркивается, что успешная защита возможна только при комплексном и скоординированном подходе, объединяющем усилия государства, профессионального сообщества и гражданского общества.

**Ключевые слова и словосочетания:** современные войны, вооруженные силы, информационная борьба, гибридная война, пропаганда, дезинформация, моральный дух, информационная атака, военнослужащие, общество

### The Impact of Information Warfare on the Population and Armed Forces Personnel: Ways to Counteract It

Harutyunyan Khachatur A.

Senior Lecturer at the Center for Strategic Management and Leadership Studies, National Defense Research University of the Ministry of Defense of the Republic of Armenia, Lieutenant Colonel (Yerevan, RA)

**Abstract.** In order to comprehensively study the nature of modern wars and armed conflicts, predict future wars, effectively carry out military construction and the development of the Armed Forces, and, in particular, more effectively organize the work of the General Staff of the Armed Forces, it is important to comprehensively and deeply study and understand the modern capabilities and means of conducting information warfare, which is a characteristic feature of

modern wars, in order to effectively counter the information warfare waged by the enemy: Information warfare is becoming increasingly complex and multi-layered in the context of globalization and the rapid development of digital technologies. It is seen as one of the key instruments of political, economic, and military pressure aimed at changing public consciousness, undermining social stability, and reducing the defense potential of the state. The article examines the impact of information warfare on two priority target groups: the civilian population and the armed forces personnel. Typical tools for influencing the civilian population include mass information dumping, manipulation on social networks, the spread of fake news, and the creation of an atmosphere of distrust toward official institutions. Such actions can cause distrust of the state's military and political leadership, uncertainty about security, fear, and social fragmentation. Information attacks on the Armed Forces are aimed at undermining the morale and psychological state of military personnel and reducing discipline. The article presented the components of information warfare, its impact on national security and public institutions, as well as strategies for state and public counteraction, with a focus on the main areas of counteraction, including the development of a national information security system, and improving the media literacy of citizens and military personnel. It emphasizes that successful defense is only possible with a comprehensive and coordinated approach that combines the efforts of the state, the professional community, and civil society.

**Keywords & phrases:** modern wars, armed forces, hybrid warfare, information warfare, propaganda, disinformation, morale, information attack, society, military personnel

### Ներածություն

Տեղեկատվությունն այսօր դարձել է ամենահզոր ռազմավարական ռեսուրսներից մեկը: Պետություններն ու ոչ պետական դերակատարները՝ ի դեմս մեդիա կազմակերպությունների, քաղաքական կուսակցությունների և կիբեր-հաքերների, կարողանում են տեղեկատվությունը վերածել զենքի՝ ազդեցություն գործադրելով հասարակական ընկալումների և որոշումների վրա [7]: Տեղեկատվական պայքարը դուրս է գալիս դասական պատերազմի սահմաններից՝ ընդգրկելով մեդիադաշտը, սոցիալական հարթակները և նույնիսկ անհատների գիտակցությունը [10]:

Սույն հոդվածը նպատակ ունի բացահայտել տեղեկատվական պայքարի բաղադրիչները, ներկայացնել դրա ազդեցությունը ազգային անվտանգության և հասարակական ինստիտուտների վրա, ինչպես նաև դիտարկել պետական և հասարակական դիմակայման ռազմավարությունները:

Նորագույն տեխնոլոգիաներով և ՄՌՏ-ներով հագեցած ժամանակակից պատերազմներում առանց տեղեկատվական պայքարի վարման անհնար է հաջողությամբ պատերազմավարել: Այս համատեքստում թեման արդիական է նաև պաշտպանությանը պետության պատրաստման համատեքստում՝ հնարավոր պատերազմին համալիր կերպով նախապատրաստվելու առումով [13]:

Տեղեկատվական պայքարին ուղղված մեծ հետաքրքրությունը պատահական չէ, քանի որ տեղեկույթը դարձել է թվային տեխնոլոգիայի դարաշրջանի հզոր զենք, իսկ տեղեկատվական ոլորտի արագընթաց զարգացումը ստեղծել է նաև պայքարի նոր ձևեր ու եղանակներ, որոնք բավականին արդյունավետ են մերօրյա պատերազմներում: Շատ անգամ գործը չի հասնում հրթիռների, արկերի ու առհասարակ՝ ՉՈՒ-ի համալիր գործածությանը, քանի որ տեղեկատվական պայքարը հաճախ դեռ վաղօրոք շրջանում լուծում է մի շարք հարցեր: Ակնհայտ է, որ

տեղեկատվական պայքարը կամ դրա դեմ մղվող տեղեկատվական հակապայքարը դառնում են գործոն, որ զգալի ազդեցություն է ունենալու ծավալվելիք հնարավոր պատերազմի սկզբի, ընթացքի և ելքի վրա: Ուստի, մեկ անգամ ևս պետք է նշել, որ հիբրիդային պատերազմներում տեղեկատվական պայքարը պատերազմող կողմերի պայքարի նոր, ռազմավարական ձև է, որի դեպքում կիրառվում են հակառակորդի տեղեկատվական ոլորտի վրա ներագոյող և պատերազմի ռազմավարական նպատակներին հասնելու սեփական շահեր հետապնդող հատուկ ձևեր և միջոցներ [14]:

### Տեղեկատվական պայքարի էությունը

Տեղեկատվական պայքարը սահմանվում է, որպես. «տեղեկատվական ոլորտում պայքարի ձև՝ հակառակորդի նկատմամբ տեղեկատվական գերազանցության (գերակայության) հասնելու նպատակով, նրա տեղեկատվական համակարգերի ու օբյեկտների վրա տեղեկատվական, տեղեկատվական-քարոզչական, տեղեկատվական-հոգեբանական կամ ֆիզիկական ազդեցություն գործելու (ներագոյող) և դրանց ձեռնարկած նմանատիպ ազդեցությունից պաշտպանվելու միջոցով» [4; 5; 9]:

Տեղեկատվական պայքարը նպատակաուղղված գործունեություն է, որը ձեռնարկվում է ինչպես հակառակորդի նկատմամբ տեղեկատվական գերազանցության հասնելու, այնպես էլ նրա որոշումների կայացման վրա ազդելու և դրանք խափանելու, նրանից նախաձեռնողականությունը խլելու նպատակով՝ նրա ռազմաքաղաքական դեկավարությանը, բնակչությանը և ՉՈՒ-ի անձնակազմին [8], կառավարման ու տեղեկատվական համակարգերին, օբյեկտներին, գործընթացներին և ռեսուրսներին տեղեկատվական ու ֆիզիկական ազդեցություն և վնաս հասցնելու միջոցով, միաժամանակ այդպիսի ազդեցությունից պաշտպանելով մեր տեղեկատվական օբյեկտները, գործընթացները, ռեսուրսներն ու տեղեկատվական համակարգերը այդպիսի ազդեցությունից [6; 11; 12]:

Այլ կերպ ասած՝ տեղեկատվական պայքարի բոլոր դրսևորումների առջև խնդիր է դրված ազդել հակառակորդի տեղեկատվական ենթակառուցվածքների, նրա հեռահաղորդակցության համակարգերի վրա՝ նպատակ ունենալով ադնատել ստացվող տեղեկատվությունը, հակառակորդին զրկել տեղեկատվություն ստանալու նոր հնարավորություններից կամ ոչնչացնել նրա տեղեկատվական միջոցները, ինչպես նաև ապահովել սեփական տեղեկատվական ռեսուրսների պաշտպանությունը հակառակորդի համանման գործողություններից:

Տեղեկատվական պայքարը հակառակորդի պետական և ռազմական ղեկավարման համակարգերի, նրա ռազմաքաղաքական ղեկավարման վրա բազմակողմ տեղեկատվական ներազդեցություն է:

Տեղեկատվական պայքարի էությունը պետության կամ պետությունների խմբի նկատմամբ տեղեկատվական ոլորտում էական առավելությունների հասնելու կարողությունն է, այն թույլ է տալիս բավական արդյունավետ մոդելավորել հակառակորդի վարքը և ազդեցություն ունենալ նրա վրա: Նման պատերազմներում տեղեկատվական օպերացիաները իրականացվում են բոլոր գերատեսչությունների կողմից՝ պետական և մասնավոր մարմիններ, կազմակերպություններ ու կառույցներ, արտադրական և կոմերցիոն կառուցվածքներ, որոնք նույնպես կարող են մասնակցություն ունենալ և ինքնուրույն իրականացնել տեղեկատվական օպերացիաներ՝ այդպիսով որոշակի ազդեցություն ունենալով ցանկացած հակամարտության ընթացքի և արդյունքի վրա [3, էջ 14]:

Հատկանշական է, որ տեղեկատվական պայքարի և հակապայքարի վարման համար ծախսվող միջոցներն ու գումարները, որպես կանոն, շատ ավելի փոքր են, քան լայնամասշտաբ պատերազմ վարելու համար կատարվող ծախսերը:

Այն, որ տեղեկությունը թանկարժեք և ազդեցիկ ակտիվ է, իմաստավորվել ու գիտակցվել է դեռ դարեր առաջ: Անցած դարի կեսերին տեղեկության նպատակային օգտագործումն արդեն դիտվում էր որպես հեռանկարային ու ազդեցիկ գեներ: Օրինակ՝ ԱՄՆ-ի 37-րդ Նախագահ Ռիչարդ Նիքսոնը սրանից 63 տարի առաջ նշել էր, որ «տեղեկատվության մեջ ներդրված յուրաքանչյուր 1 դոլարն ավելի արժեքավոր է, քան սպառազինության համակարգի ստեղծման համար ներդրված յուրաքանչյուր 10 դոլարը, քանի որ վերջինս դժվար թե երբևէ կիրառվի, այն դեպքում, երբ տեղեկատվությունն աշխատում է ամեն ժամ և ամենուր» [1]:

Ապագայում ծավալվող պատերազմներում տեղեկատվական ներուժի տիրապետումը դառնում է այնպիսի անհրաժեշտ բաղկացուցիչ,

ինչպիսին էր անցյալի պատերազմներում՝ միջոցներին, սպառազինությանը, ռազմամթերքին, տրանսպորտին և այլնին տիրելը: Ժամանակակից պատերազմներում տեղեկատվական պայքարի հաղթանակով, փաստորեն, կարող ենք հասնել պատերազմի ռազմավարական և քաղաքական նպատակներին, հակառակորդի տնտեսական ներուժի խափանմանը և քաղաքական կարգի տապալմանը, ինչպես նաև, որը շատ կարևոր է՝ նրա ՉՈՒ-ի անձնակազմի և բնակչության բարոյալքմանն ու պայքարի կամքի կտրմանը: Տեղեկատվական պայքարը երբեմն դառնում է գործուն միջոց կազմաքանդելու հասարակության և ՉՈՒ-ի համախմբվածությունը, թուլացնելու նրա կամքը, իջեցնելու բարոյահոգեբանական մակարդակը, պառակտելու նրան: Եթե հաշվի առնենք, որ ժամանակակից պատերազմներում ՉՈՒ-ի անձնակազմի և բնակչության բարոյահոգեբանական մակարդակը և ոգին հաճախ գնահատվում են որպես «ծանրության կենտրոն», սպա պարզ է դառնում, որ տեղեկատվական պայքարի ձևերով ու եղանակներով, մասնավորապես՝ տեղեկատվական-հոգեբանական ներազդեցությամբ հարված հասցնելով այս «ծանրության կենտրոնին»՝ հնարավոր է դառնում վճռել պատերազմի ելքը դեռ պատերազմի մեջ չմտած, նույնիսկ ֆիզիկապես ներկա չլինելով տվյալ երկրի տարածքում [12]: Պատմության մեջ այդպիսի օրինակներ քիչ չեն, մասնավորապես 1939 թվականին Չեխոսլովակիայի գրավումը նացիստական Գերմանիայի ուժերի կողմից, հեղափոխությունների ու պետությունների կազմաքանդման օրինակներ «Արաբական գարնան» շրջանում, ռուս-ուկրաինական հակամարտության ընթացքում ուկրաինացի և ռուս ժողովուրդների պայքարի ոգու գնահատման օրինակներով և այլն [2]:

Այսպիսով՝ տեղեկատվական պայքարի **նպատակներն են.**

- պետության և ՉՈՒ-ի ղեկավարության կողմից ռազմավարական կայունության, ռազմական շինարարության և ՉՈՒ-ի ամենօրյա գործունեության ապահովմանն ուղղված միջոցառումների արդյունավետության բարձրացումը,
- ռազմական հակամարտության սանձազերծման սպառնալիքի կանխումը (նվազեցումը),
- զինված հակամարտության՝ պատերազմի վերածման կանխարգելումը (այդ թվում՝ զանգվածային ոչնչացման գեների կիրառմամբ),
- պետության համար սպառնալիք հանդիսացող օտարերկրյա պետությունների ռազմաքաղաքական միությունների քայքայումը և կազմալուծումը,
- ՉՈՒ-ի անձնակազմի տեղեկատվական ռեսուրսների և տեղեկատվական օբյեկտների

վրա հակառակորդի տեղեկատվական ազդեցության արդյունավետության չեզոքացումը կամ նվազեցումը,

• տեղեկատվական գեների միջոցով հակառակորդի նկատմամբ տեղեկատվական գերազանցության հասնելը և սեփական տեղեկատվական համակարգերի ապահովումն ու պաշտպանությունը:

Հաշվի առնելով տեղեկատվական պայքարի՝ որպես ժամանակակից պատերազմավարության բնութագրիչի, ներազդող լայն հնարավորությունները ՉՈՒ-ի անձնակազմի և բնակչության վրա, ակնհայտ է դառնում, որ գլխավոր նպատակադրումը հանդիսանում է դրանց միջոցով հակառակորդի մտապատկերում օբյեկտիվ իրականության աղավաղված պատկերի ձևավորումը: Տեղեկատվական-քարոզչական և տեղեկատվական-հոգեբանական նորգործության եղանակներով ու ձևերով հնարավոր է դառնում ձևավորել անօգնականության զգացում և հուսալքություն հակառակորդի շարքերում: Բնակչությունը և ՉՈՒ-ի անձնակազմը հոգեբանորեն ճնշվում են, խուճապային տրամադրություն ու վիճակ է ստեղծվում, ինչը խանգարում է ռազմական միջոցառումների իրականացմանը, ինչի արդյունքում էլ պետությունը ամբողջությամբ հասնում է գոհի կարգավիճակի [3, էջ 38]:

Միաժամանակ տեղեկատվական-քարոզչական և հոգեբանական այդ գործիքները անհրաժեշտ են հայրենակից բնակչության և ՉՈՒ-ի անձնակազմի ոգին բարձր պահելու համար:

**Տեղեկատվական պայքարի նպատակներին հասնելու համար կիրառվում են հետևյալ միջոցները.**

**ա) տեղեկատվական հոգեբանական իշխում, տեղեկատվական գերազանցության ապահովում,** որը իրավիճակի վերաբերյալ տեղեկության անընդհատ հոսքը հավաքելու, մշակելու և բաշխելու ունակությունն է՝ միևնույն ժամանակ խանգարելով հակառակորդին անելու նույնը: Տեղեկատվական իշխումը կարող է սահմանվել նաև որպես օպերացիայի իրականացման այնպիսի տեմպի ապահովման ունակություն, որը գերազանցում է հակառակորդի տեմպը: Տեղեկատվական իշխման կարելի է հասնել յուրային տեղեկատվական աղբյուրների հզորության մեծացմամբ:

Տեմպի, դինամիկայի և տեղեկատվական գերազանցության ապահովմանն ուղղված առաջանցիկության սկզբունքի կիրառման տեսանկյունից առանձնահատուկ կարևորվում է Ջոն Բոյդի հանգույցի տեսությունը:

**բ) տեղեկատվական գեների անհամաչափության օգտագործում.** դրա շնորհիվ հնարավոր է պայքարել նույնիսկ ավելի հզոր սուբյեկտի դեմ: Տեղեկատվական անհամա-

չափությունը տեղեկատվական-հոգեբանական ազդեցության և տեղեկատվական գեների առավել կարևոր բնութագրերից է: Դրա շնորհիվ են, օրինակ, ահաբեկչական խմբավորումները կարողանում քարոզչական պատերազմ մղել իրենցից անհամեմատ ավելի հզոր կազմակերպությունների՝ պետությունների և դրանց կանոնավոր բանակների դեմ:

Տեղեկատվական անհամաչափության պատճառը ցանկացած տեղեկությանի տարածության բազմարժեքությունն է և դրանում խոցելի կողմերի մշտական առկայությունը: Այս համատեքստում առաջնային պլան են գալիս անհամաչափ պատերազմներում կիրառվող միջոցները, որոնք թույլ են տալիս անգամ ուժային անհավասար պայմաններում գործածել իրապես արդյունավետ միջոցներ և այդպիսով՝ արդյունավետ պայքար:

**Տեղեկատվական պայքարի գլխավոր առանձնահատկություններն են՝**

• նախապատրաստական փուլի գաղտնիությունը (այդ թվում՝ տեղեկատվական ուժերն ու միջոցները հակառակորդի հետախուզության համար աննկատ կերպով տարաշարժելու հնարավորությունը),

• տեղեկատվական հարվածի կամ գրոհի հանկարծակիությունն ու անընդհատությունը,

• քողարկման և իրական նպատակների թաքցման համար նպաստավոր պայմանները, ուրիշի անունից գործելու հնարավորությունը,

• տեղեկատվական ագրեսիայից նյութական հետքեր չմնալը, ինչի շնորհիվ հնարավոր չէ պարզել և պատասխանատվության ենթարկել ագրեսորին,

• հակառակորդին հեռվից (առանց նրա տարածք ներխուժելու) հարվածելու հնարավորությունը,

• տեղեկատվական հարձակման դեմ հակառակորդ պետության ռազմական ներուժի անզորությունը,

• տեղեկատվական հարվածի ծանրության աստիճանի համեմատելիությունը հակառակորդի տարածքում ռազմական գործողությունների հետևանքների հետ (օրինակ՝ խուճապ, տեխնաժին աղետների առաջացում, ֆինանսաբանակային համակարգի կազմալուծում և այլն),

• տեղեկատվական հարվածին համարժեք պատասխան տալու դժվարությունը,

• դաշինքների ու միությունների ստեղծման դժվարությունը, հաճախ բարեկամ-թշնամի հստակ սահմանազատման անհնարինությունը,

• բնակչության տարբեր խավերի վրա տեղեկությանի ազդեցության տարբերակվածությունը՝ պայմանավորված լսարանի առանձնահատկություններով,

• տեղեկության ազդեցության կործանարար հետևանքների ակնառու վկայություններ չկինելը. բնակչությունը չի էլ գգում, որ ենթարկվում է այդպիսի ազդեցության, ուստի չի կարողանում գործի դնել պաշտպանական մեխանիզմները:

**Տեղեկատվական պայքարի ազդեցությունը բնակչության վրա**

Տեղեկատվական պայքարն ուղղված է հանրային կարծիքի ձևավորմանը: Կեղծ լուրերի և քարոզչական մեդիա արշավների միջոցով կարելի է ձևավորել վախ, անվստահություն իշխանությունների նկատմամբ, կասկած յուրային ուժերի նկատմամբ և պառակտում հասարակության մեջ: Տեղեկատվական հոսքերի միջոցով հաճախ արհեստականորեն խթանվում են սոցիալական պառակտումները՝ ըստ գաղափարական, քաղաքական, էթնիկ կամ կրոնական գծերի: Սա նվազեցնում է հասարակական համախմբվածությունը, ինչը կարևոր պատերազմական իրավիճակներում:

Բնակչության վրա տեղեկատվական պայքարի ազդեցության վառ օրինակներից է 2011 թվականին Լիբիայում տեղի ունեցած քաղաքացիական պատերազմը: Քաղաֆիի դեկավարության տարիներին երկրի բնակչության համար ստեղծված էին բարեկեցիկ պայմաններ (անվճար կրթություն և բժշկություն, պետության կողմից նորաստեղծ ընտանիքներին բնակարանի տրամադրում և այլն), սակայն բնակչության շրջանում տարված տեղեկատվական պայքարի արդյունքում (որտեղ ժողովրդավարությունը և ազատությունը կիրառվեց որպես տեղեկատվական զենք) ժողովուրդը ընդվզեց երկրի իշխանության դեմ, որն ավարտվեց Քաղաֆիի պարտությամբ և նրա մահապատժով [16]:

Այսպիսով կարելի է փաստել, որ տեղեկատվական պայքարը հանդիսանում է ժամանակակից պատերազմների կարևոր բաղկացուցիչ մասերից մեկը և նրա արդյունավետ կիրառումը կարող է անգամ հանգեցնել առանց ռազմական գործողությունների վարման հաղթանակի հասնելուն:

**Տեղեկատվական պայքարի ազդեցությունը ՉՈՒ անձնակազմի վրա**

Հատկանշական է, որ ռազմական գործի տեղեկությանը չի փոխանցվում, այսօր էապես փոխել է ինչպես ռազմական գործողությունների լուսաբանման բովանդակությունը, այնպես էլ դրանց ընկալումն ու ազդեցությունը բանակի ու բնակչության վրա:

Չինձառայողները հատկապես խոցելի են դառնում, երբ ասպատեղեկատվությունն ուղղակիորեն վերաբերում է իրենց դիրքին, անվտանգությանը կամ դեկավարության ունակություններին: Սոցիալական ցանցերում ուղղորդված

լուրերը կարող են նվազեցնել մարտական ոգին, առաջացնել անհանգստություն և խուճապ: Այսպես. 2020 թ. 44-օրյա պատերազմի ընթացքում հակառակորդի ԱԹԱ-ների կիրառման թվաքանակի վերաբերյալ հենց նրա հաղորդած արհեստականորեն ուժնացված տվյալները, ինչը միտված էր նաև վախի մթնոլորտի ձևավորմանը, ադրբեջանական ՉԼՄ-ները լուսաբանեցին մեծ թափով, և, որպես արդյունք, մեկ ԱԹԱ-ի հարվածի տեսագրությունը հրապարակվում էր բազմակի անգամ և տարբեր դիտանկյուններից՝ ստեղծելով թյուր կարծիք և կեղծ տպավորություն, թե հակառակորդը կիրառում է հազարավոր ԱԹԱ-ներ, հիմնականում «Բայրաքթար» տեսակի: Հակառակորդի նման մեթոդը երբեմն խայծի պես յուրացնում էին հայրենական ՉԼՄ-ները, որոնք իրենց հերթին բազմապատկում էին նշված տեսագրությունները: Այս մեթոդի տվյալ կիրառությունը կարելի է այսօր նկատել նաև ռուս-ուկրաինական հակամարտությունում [1, էջ 81]: Այս իմաստով 44-օրյա պատերազմի դեպքերը ցույց տվեցին, թե որքան կարևոր է պատերազմի ժամանակ սոցիալական մեդիայով տարածվող տեղեկության վերահսկողությունը՝ ինչպես ռազմական գաղտնիքի տարածման, այնպես էլ հասարակության ու ՉՈՒ-ի անձնակազմի մեջ տարաբնույթ տրամադրությունների սերմանման առումով:

Չինձառայողները հաճախ լինում են տարբեր տեղեկատվական աղբյուրների ազդեցության տակ՝ առանց ֆիլտրելու դրանց արժանահավատությունը: Սա կարող է հանգեցնել դյուրահավատության և որոշումների կայացման սխալ մեխանիզմների զարգացման:

Հակառակորդը կարող է նաև թիրախավորել զինված ուժերի ընտանիքների անդամներին՝ տարածելով դավադրություններ, վախեցնող պատկերներ կամ գոհերի ու գերիների վերաբերյալ կեղծ տեղեկություններ՝ նպատակ ունենալով բարոյալքել զինձառայողին:

2016 թ. Ապրիլյան քառօրյայի և 2020 թ. Արցախյան 44-օրյա պատերազմի ժամանակ հակառակորդը պարզորոշ դիմեց նաև տեղեկատվական պայքարի և շարունակում է այդ պայքարն առ այսօր: Ընդ որում, Ադրբեջանը Հայաստանի դեմ տեղեկատվական-քարոզչական և տեղեկատվական-հոգեբանական գրոհն սկսել էր պատերամից դեռ մեկ տարի առաջ և ամբողջ մի տարի հակահայ քարոզչությամբ հիմնավորում ու արդարացնում էր իր հնարավոր ռազմական գործողությունների դիմելը, Արցախյան հիմնախնդիրը ռազմական ճանապարհով լուծելու մտադրությունը: Ամբողջ պատերազմի ընթացքում, օրենքով արգելափակելով իր համացանցային տիրույթը, Ադրբեջանը մղում էր տեղեկատվական ակտիվ պատերազմ ընդդեմ հայկական կողմի: Յուրադրում էր մեր զինձա-

ռայոդների ու գրահատելանիկայի խոցումներ, տեղի ՉԼՄ-ներն անմիջապես տարածում էին դրանք, ինչը վախի ու հուսալքության այիք էր առաջացնում հասարակության շրջանում, իսկ որոշ զինծառայողների հոգում՝ նաև խուճապային տրամադրություններ: Ադրբեջանը պարբերաբար ցուցադրում էր ռազմագերիներին վերաբերող նկարահանումներ, ակտիվորեն տարածում ապատեղեկատվություն՝ սոցիալական ցանցերով և բջջային հավելվածների մեդիա հարթակներով, հատկապես՝ «Telegram» հավելվածով և այլն [3, էջ 68]:

Տեղեկատվական պայքարի վարման միջազգային փորձը ցույց է տալիս, որ դրա գլխավոր մարմիններից մեկը պաշտպանական կամ անվտանգային գերատեսչություններն են, գլխավորապես զինված ուժերը՝ ի դեմս ՊՆ-ի կամ ԳՇ-ի, կամ էլ անվտանգության մարմինները, որոնք գտնվում են զինված ուժերի հետ անմիջական գործակցության մեջ: Սա ստիպում է անել հետևություն, որ տեղեկատվական պայքարի և, հատկապես՝ հակապայքարի վարման առումով հարկավոր է մեծ ուշադրություն դարձնել դրա վարմանը ՉՈՒ-ի կողմից՝ տարով նրան առավել մեծ լիազորություններ և ընձեռելով ավելի մեծ հնարավորություններ:

### **Եզրակացություն**

Տեղեկատվական պայքարի/հակապայքարի շրջանակներում հակառակորդի կողմից իրականացվող տեղեկատվական գրոհները պահանջում են համապարփակ պատասխան: Դրանց դեմ պայքարը պետք է տեղի ունենա միջգերատեսչական, հասարակական, տեխնոլոգիական և հոգեբանական մակարդակներում: Միայն համալիր մոտեցմամբ հնարավոր կլինի պաշտպանել ինչպես բնակչությանը, այնպես էլ Չինված ուժերը արտաքին տեղեկատվական ազդեցություններից և ապահովել ազգային անվտանգությունը: Հակառակորդի կողմից կիրառվող տեղեկատվական գրոհները կարող են ուղիղ ազդեցություն ունենալ հասարակական ընկալումների, զինված ուժերի բարոյահոգեբանական կայունության և քաղաքական կայունության վրա: Ուստի տեղեկատվական գրոհներին դիմակայելը պահանջում է համակարգված, բազմաշերտ մոտեցումներ:

Տեղեկատվական գրոհներին դիմակայության հենասյուներից է, օրինակ, բնակչության և զինվորական անձնակազմի մեդիագրագիտության և կրիտիկական մտածողության զարգացումը: Հանրության կրթական պատրաստվածությունը կեղծ և մանիպուլյատիվ տեղեկատվությունը տարբերակելու հարցում որոշիչ նշանակություն ունի: Պետությունը պետք է ապահովի հետևողական տեղեկատվական հաղորդակցություն՝ մատչելի և վստահելի լեզվով, օգտագործելով պաշտոնական լրատվամիջոց-

ներ, սոցիալական ցանցեր և համայնքային հաղորդակցության մեխանիզմներ:

Տեղեկատվական գրոհները չեզոքացնելու կարևոր գործիքներից են հակափաստարկված հաղորդագրությունները, որոնք ներկայացվում են հասարակությանը՝ հստակ լեզվով, տվյալներով և վերլուծություններով: Ապատեղեկատվությանը հակազդելու հաջող օրինակ է հակաարշավների իրականացումը, երբ որոշ սոցցանցերում ստեղծվում են ճշգրիտ տեղեկատվության արտահոսքեր՝ թուլացնելով կեղծ լուրերի ազդեցությունը: Նման մեխանիզմներն ապացուցել են իրենց արդյունավետությունը ինչպես խաղաղ պայմաններում, այնպես էլ պատերազմի ժամանակ, երբ տեղեկատվական ճնշումները առավել ուժեղ են:

Կիրառանվտանգության ապահովումը տեղեկատվական պաշտպանությունում նույնպես առանցքային բաղադրիչ է, որը ներառում է տեղեկատվական համակարգերի պաշտպանություն (ֆիզիկ, մալվեր, հաքերային գրոհներ), սոցիալական մեդիայի մշտադիտարկում տեղեկատվական մանիպուլյացիաներ և ֆեյքեր հայտնաբերելու համար, արհեստական բանակա-նություն կիրառում՝ ապատեղեկատվությունը նախանշելու և կանխելու նպատակով: Ապատեղեկատվության դեմ պայքարի արդյունավետությունն աճում է այն դեպքում նաև, երբ գոյություն ունի հստակ իրավական դաշտ, որը սահմանում է պատասխանատվության դաշտը: Այս համատեքստում կարևորվում է նաև պետական գերատեսչությունների և միջազգային գործընկերների համագործակցությունը: ՉՈՒ անձնակազմի բարոյահոգեբանական կայունության բարձրացմանն ուղղված միջոցառումները նույնպես առանցքային են: Դրանք ներառում են՝ հոգեբանական պատրաստվածությունը՝ քարոզչությանը չարվելու նպատակով, տեղեկատվության գտման մեխանիզմները՝ ոչ ստույգ տվյալների տարածման բացառմամբ և հոգեբանական պաշտպանական միջոցառումները, որոնց շրջանակում զինծառայողներին ուսուցանվում է, թե ինչպես ճանաչել ու չեզոքացնել տեղեկատվական ներգործությունը:

### **Օգտագործած գրականության ցանկ**

1. **Աղաջանյան Բ. Մ., Շահվերդյան Ա. Մ.**, Տեղեկատվական պայքարի մեթոդների և հնարների օգտագործումը հիբրիդային պատերազմավարության շրջանակներում // ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի «Հայկական բանակ» ռազմագիտական հանդես, 2023, հմ. 4, էջ 78:
2. **Շահվերդյան Ա. Մ.**, Պատերազմի ժամանակ տեղեկատվական ընդդիմամարտության որոշ առանձնահատկություններ: // ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի «Հայկական բանակ» ռազմագիտական հանդես, 2020, հմ. 4, էջ 127:

3. **Ճահվերդյան Ա. Մ.** Տեղեկատվական պայքար // ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի «Հայկական բանակ» ռազմագիտական հանդեսի հավելված, 2023, հմ. 1 (86), էջ 118:
4. ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի «Հայկական բանակ» ռազմագիտական հանդեսի «Աշխատանքային տետրեր» հավելված, 2021, հմ. 3-4, էջ 204,
5. ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի «Պաշտպանական-անվտանգային տերմինների բացատրական հայերեն-ռուսերեն-անգլերեն, ռուսերեն-հայերեն, անգլերեն-հայերեն եռալեզու մեծ բառարան: – Երևան, 2015, էջ 722,
6. **Манойло А. В.,** Современные интерпретации термина «информационная война» // 1 апреля, 2012 <https://ashpi.asu.ru/ic/?p=1550> (Դիտման ամսաթիվը՝ 12.07.2025):
7. **Панарин И. Н.,** Информационная война, PR и мировая политика. – М. 2006, с. 352.
8. **Раскин А. В., Таразевич В. Е., Тарасов И. В.,** Роль и место информационного противоборства в обеспечении живучести войск в современной войне. // Стратегическая Стабильность № 1 (58) 2012, С. 14-18:
9. **Рогозин Д. М.,** Война и мир в терминах и определениях. – М. 2017, с. 638:
10. **Jingjin Huang,** Information Warfare in the Digital Age: Legal Responses to the Spread of False Information under Public International Law. // Journal of Education, Humanities and Social Sciences, Volume 28 (2024), 176-184 p. <https://doi.org/10.54097/46jmtq31>
11. **Libicki C. Martin,** What Is Information Warfare? // Center for Advanced Concepts and Technology Institute for National Strategic Studies NATIONAL DEFENSE UNIVERSITY, August 1995.
12. **Libicki C. Martin,** Conquest in Cyberspace. National Security and Information Warfare // May 12, 2007. [https://www.rand.org/pubs/commercial\\_books/CB407.html](https://www.rand.org/pubs/commercial_books/CB407.html). (Դիտման ամսաթիվը՝ 16.07.2025),
13. **Molander C. Roger, Riddile Andrew, Wilson A. Peter,** Strategic Information Warfare: A New Face of War. // “RAND” Corporation [https://www.rand.org/content/dam/rand/pubs/monographs\\_reports/2005/MR661.pdf](https://www.rand.org/content/dam/rand/pubs/monographs_reports/2005/MR661.pdf), (Դիտման ամսաթիվը՝ 25.07.2025)
14. **Nazish Mahmood, Ahmed Ijaz Malik, Muhammad Nadeem Mirza,** Analysing Hybrid Warfare and Information / Cyber Operations // Webology, Volume 18, Number 4, 2021 <https://shs.hal.science/halshs-03788137/document>,
15. **Ng Zhaohong Jeffrey,** Information Warfare – The Challenges and Opportunities for Militaries in the Information Age. // POINTER, journal of the Singapore armed forces, 2016, Vol. 42 No. 3, 49-58 p.,
16. «The Fall of Gaddafi Through CNN and Fox News»// <https://www.redalyc.org/journal/3578/357857620001/html/>, (Դիտման ամսաթիվը՝ 10.08.2025):

*Сдана/Հանձնվել է՝ 11.08.2025*

*Рецензирована/Գրախոսվել է՝ 15.08.2025*

*Принята/Ընդունվել է՝ 18.08.2025*